


1.2. Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2006թ. հունվար-հունիսին հանրապետությունում, ըստ 2217 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 300688.5 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 305240.4 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 25009.1 մլն. դրամի, այլ երկրներում՝ 80475.0 մլն. դրամի արտադրանք:

2005թ. հունվար-հունիսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 99.0%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 99.6%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2004թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2005թ.			
հունվար	81.7	100.7	81.7
փետրվար	113.2	110.1	92.5
մարտ	111.6	103.7	103.2
ապրիլ	96.7	96.3	99.8
մայիս	103.2	110.9	103.0
հունիս	106.2	106.4	109.4
հուլիս	102.6	112.7	112.3
օգոստոս	89.2	105.1	100.2
սեպտեմբեր	105.8	105.6	106.0
հոկտեմբեր	103.7	103.8	109.9
նոյեմբեր	101.5	114.3	111.5
դեկտեմբեր	100.0	106.7	111.5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2006 թ.			
հունվար	73.3	98.7	73.3
փետրվար	113.3	97.9	83.0
մարտ	99.4	87.0	82.5
ապրիլ	111.9	100.5	92.3
մայիս	99.2	102.0	91.6
հունիս	102.5	100.5	93.9

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը
ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2006թ. հունվար-հունիսի¹

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ամբողջ արդյունաբերությունը	300688.5	305240.4	99.0
<i>այդ թվում՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	56222.6	56222.6	95.6
<i>որանից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	52216.4	52216.4	97.1
<i>որից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	43636.7	43636.7	94.5
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	8579.7	8579.7	112.8
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	4006.2	4006.2	80.0
հանքագործական արդյունաբերություն	52124.3	53305.2	101.6
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	50333.7	51619.4	100.7
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	1790.6	1685.8	132.0
մշակող արդյունաբերություն	192341.6	195712.6	99.2
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրություն	84813.4	84189.1	102.8
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	7810.7	8771.0	105.0
մանածագործական արտադրություն	1288.3	1277.3	109.5
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	1050.6	1017.2	103.8
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	239.1	227.3	166.7
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	469.9	506.8	121.0
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	4226.2	4077.3	126.3
քիմիական արդյունաբերություն	7458.5	9580.3	94.6


¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ



	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	1394.3	1656.3	105.0
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	13061.6	13267.5	115.0
մետաղագործական արդյունաբերություն	54029.6	53777.1	107.4
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	4194.8	3739.4	167.8
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	2780.2	2935.0	99.2
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	3585.5	4868.6	79.0
գործունեության այլ տեսակներ	5938.9	5822.4	103.5

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2006թ. հունվար-հունիսին





¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և սկզբիցային հարկերի:


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն



- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր


Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ուսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2006թ. հունվար-հունիսին իրացվել է թողարկված արտադրանքի ծավալի 101.5%: Նշված ժամանակաշրջանում իրացված և թողարկված արտադրանքի ծավալների հարաբերակցությունն ըստ գործունեության հիմնական տեսակների, բնութագրվում է հետևյալով.

Իրացված արտադրանքը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ



- 1 - էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
- 2 - Հանքագործական արդյունաբերություն
- 3 - Մշակող արդյունաբերություն, որից՝
- 4 - սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 5 - ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 6 - մանածագործական արտադրություն
- 7 - հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 8 - կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն
- 9 - բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
- 10 - հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 11 - քիմիական արտադրություն
- 12 - ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
- 13 - այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 14 - մետաղագործական արդյունաբերություն
- 15 - պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 16 - մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 17 - ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 18 - գործունեության այլ տեսակներ

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ հանրապետության մարզերի, 2006թ. հունվար-հունիսին¹

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ընդամենը ԳԳ	300688.5	305240.4	99.0
<i>այդ թվում՝</i>			
ք. երևան	133505.9	133897.8	105.0
Արագածոտն	3418.2	3541.3	100.2
Արարատ	21993.5	24345.5	99.3
Արմավիր	15077.2	14633.7	101.5
Գեղարքունիք	4242.6	3997.8	66.0
Լոռի	24123.9	25021.5	100.3
Կոտայք	29565.7	29234.7	86.6
Շիրակ	6451.5	6386.4	101.5
Սյունիք	58114.7	59950.7	105.2
Վայոց ձոր	2267.2	2311.3	91.6
Տավուշ	1928.1	1919.7	111.2

2006թ. հունվար-հունիսին 2005թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետության 7 մարզերի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ, որը ներկայացվում է ստորև, ըստ մարզերի և արտադրությունների.

-երևան քաղաքում՝ 5.0%, հիմնականում ի հաշիվ պատրաստի մետաղե արտադրատեսակների (168.3%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (149.1%), մեքենաների և սարքավորանքի արտադրության (130.3%), հրատարակչական և տպագրական գործունեության (129.3%), ծխախոտային արտադրատեսակների (115.1%), մանածագործական և կարի արտադրության (114.7%) և մետաղագործական արդյունաբերության (113.6%),

-Տավուշի մարզում՝ 11.2%, հիմնականում ի հաշիվ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (2.8 անգամ), էլեկտրաէներգիայի (2.5 անգամ) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները արտադրության (106.2%),

-Սյունիքի մարզում՝ 5.2%, հիմնականում ի հաշիվ մետաղե հանքաքարերի արդյունահանման (105.3%) և էլեկտրաէներգիայի արտադրության (106.6%),

-Արմավիրի մարզում՝ 1.5%, հիմնականում ի հաշիվ սննդամթերքի, ներառյալ խմիչքները (108.4%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (3.7 անգամ), ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների (2.5 անգամ) և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (170.2%),

-Շիրակի մարզում՝ 1.5%, հիմնականում ի հաշիվ մանածագործական արտադրության (172.1%) և հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (143.0%),

-Լոռու մարզում՝ 0.3%, հիմնականում ի հաշիվ քիմիական արդյունաբերության (10.3 անգամ), մանածագործական և կարի (144.3%) ու մեքենաների և սարքավորանքի արտադրության (112.0%),


¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, մարզերով առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, մարզերով» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-203):

-Արագածոտնի մարզում՝ 0.2%, հիմնականում ի հաշիվ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (3.3 անգամ) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները արտադրության (112.6%):

Արարատի մարզում գրեթե պահպանվել է նախորդ տարվա արտադրության մակարդակը (99.3%):

Հարկ է նշել, որ հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի ավելի քան 44%-ը բաժին է ընկել Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպություններին:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության մարզերի, 2006թ. հունվար-հունիսին



1. Երևան	2. Արագածոտն	3. Արարատ	4. Արմավիր
5. Գեղարքունիք	6. Լոռի	7. Կոտայք	8. Շիրակ
9. Սյունիք	10. Վայոց ձոր	11. Տավուշ	

Կազմակերպությունների արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2006թ. հունվար-հունիսին

	Կազմակերպությունների քանակը	Արդյունաբերական արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ ¹	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ ¹	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ընդամենը	2217	77385	262784.2	267336.1	98.8
<i>այդ թվում՝</i>					
մինչև 5 մարդ (գերփոքր) ²	954	2486	3474.5	3838.4	57.2
6 – 50 մարդ (փոքր) ²	995	15729	29652.8	29242.4	110.3
51 – 100 մարդ (միջին) ²	87	6279	8045.6	8133.0	128.8
101 և ավելի մարդ (խոշոր) ²	181	52891	221611.3	226122.3	97.9

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 43.0 և 44.9%: Հատկանշական է, որ վիճակագրական մոնիտորինգում գրեթե 88% կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 12.6%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 8.2% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 84.3%-ը:

2006թ. հունվար-հունիսին արտադրված (հաշվառվող) 122 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 75 -ի գծով ձեռք է բերվել կան գերազանցվել 2005թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսիսնիկական նշանակության արտադրանքի՝ 70 -ից 45 -ի և սպառողական ապրանքների՝ 52 -ից 30 -ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները³

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-հունիսին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2006	2005 ⁴	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	105419.1	104526.4	100.9
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	64347.1	62036.7	103.7
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	19248.0	19108.0	100.7
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	21824.0	23381.7	93.3
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ⁵	5148.6	4953.8	103.9
մշակութային և տնտեսական նշանակության	16675.4	18427.9	90.5

¹ Առանց վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առածականությամբ ապրանքների բազային ցուցանիշի):

² Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն, որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-205):

³ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

⁴ 2005թ սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2006թ. գներով:

⁵ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները¹

	2006թ. հունվար-հունիս	2005թ. հունվար-հունիս	2006թ. հունվար-հունիսը 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Միս ² , տոննա	19687.1	17753.3	110.9
Սաամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա	867.9	648.5	133.8
Պանիր, տոննա	6922.6	6905.9	100.2
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ² , տոննա	165895	152328	108.9
Պաղպաղակ, տոննա	1185.4	941.8	125.9
Պահածո, տոննա	1139.3	1533.5	74.3
Ալյուր, տոննա	59049.4	70223.9	84.1
Չավարեղեն, տոննա	281.9	541.0	52.1
Հաց և հացամթերք, հազ. տոննա	147.9	147.9	100.0
Հրուշակեղեն, տոննա	3023.8	1992.0	151.8
Սակարոնեղեն, տոննա	1429.2	1251.2	114.2
Շաքարավազ, տոննա	601.0	788.0	76.3
Բուսական յուղ, տոննա	1505.0	101.9	14.8 անգամ
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	5621.0	6111.0	92.0
Կոնյակ, հազ. լիտր	3315.2	3747.3	88.5
Գինի, հազ. լիտր	1268.0	982.8	129.0
Շամպայն գինի, հազ.լիտր	129.1	124.5	103.7
Գարեջուր, հազ. լիտր	5763.7	4524.7	127.4
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	15721.0	12662.0	124.2
Բնական հյութեր, հազ.լիտր	2403.9	2098.2	114.6
Հանքային ջրեր, հազ. լիտր	11399.5	10833.9	105.2
Աղ, տոննա	17416.6	15799.9	110.2
Սիգարետներ, մլն.հատ	1431.4	1351.6	105.9
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	239.3	357.6	66.9

Սանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-հունիս	2005թ. հունվար-հունիս	2006թ. հունվար-հունիսը 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	102.9	86.3	119.2
Գորգեր և գորգեղեն, մ ²	13353	13843	96.5
Գուլպեղեն, հազ. զույգ	341.2	177.0	192.8
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	1735.1	1086.7	159.7
Կարի արտադրանք ³ , մլն. դրամ	3343.9	3168.4	105.5

2006թ. հունվար-հունիսին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաբաներկանյութերի արտադրությունը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 30.4%-ով, լվացող, մաքրող և օսլայող միջոցներինը՝ 13.8%-ով, պլաստմասսայե արտադրատեսակներինը՝ 8.2%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և կաուստիկ սոդայի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 14.1 և 34.3%-ով:

¹ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետեղվում է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):
² Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):
³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-հունիս	2005թ. հունվար-հունիս	2006թ. հունվար-հունիսը 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	24509	12987	188.7
Ապրանքային բետոն, մ ³	49184	40015	122.9
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	92142	72068	127.9
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	180168	167439	107.6
Կիր, տոննա	8500	4582	185.5
Ցեմենտ, հազ. տոննա	277.1	255.1	108.6
Գաջ, տոննա	19350	17930	107.9
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ ³	25154	22069	114.0
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	91232	52317	174.4
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	28092	21561	130.3

Մետաղագործական արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից 2006թ. հունվար-հունիսին 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ մոլիբդենի խտանյութի արտադրությունն ավելացել է 40.4%-ով, պղնձի խտանյութում պղնձինը՝ 8.5%-ով, իսկ ֆեռոմոլիբդենի և կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 4.9 և 5.4%-ով:

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-հունիս	2005թ. հունվար-հունիս	2006թ. հունվար-հունիսը 2005թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	27	8	3.4 անգամ
Ռելե, հատ	130027	142489	91.3
Ուժային ճկուն կաբելներ, կմ	149.6	2.3	65 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	573.7	53.3	10.8 անգամ
Էմալապատ լարեր և փաթուխալարեր, տոննա	66.8	40.8	163.7
Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ	2848	4360	65.3
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	-	923.2	-
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	85	38	2.2 անգամ
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	6728	6592	102.1
Պոմպեր, հատ	357	173	2.1 անգամ
Համակարգիչներ, հատ	848	1090	77.8
Էլեկտրական հաշվիչներ, հատ	10633	1447	7.3 անգամ
Փազային ջրատաքացուցիչներ, հատ	375	180	2.1 անգամ
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	90	174	51.7
Ավտոմոբիլային մարտկոցներ, հատ	-	1579	-
Ավտոգենային սարքավորումներ, հազ. հատ	63.6	56.2	113.2
Մետաղահատ գործիքներ, հատ	93032	70758	131.5
Ցածրավոլտ էլեկտրական ապարատներ, հատ	31338	38484	81.4
Օպտիկա-մեխանիկական սարքեր և սարքավորումներ, հատ	872	2995	29.1

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-հունիսին հանրապետությունում թողարկվել է 3117.3 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 93.0%-ը: Ընդ որում, ՀԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 15.2% -ով, իսկ ՋԷԿ-երում և ՀԱԷԿ-ում նվազել է, համապատասխանաբար, 32.6 և 4.2% -ով:

2006թ. հունվար-հունիսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1457.8 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 46.7% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 636.3 մլն. կվտ ժամ և 20.4%-ը, ՀԷԿ-երը՝ 1021.6 մլն. կվտ ժամ և 32.8%-ը, հողմային էլեկտրակայանը՝ 1.6 մլն. կվտ ժամ և 0.1%:

2006թ. հունվար-հունիսին հանրապետությունում թողարկվել է 200.4 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 72.3%: